



ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՈՐՈՇՈՒՄ

15 մարտի 2019 թ.

N 166-Ա

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԿՈՇՏ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ


Հիմք ընդունելով Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 28-ի N 1135-Ն որոշման 15-րդ կետի 1-ին ենթակետը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ղ ղ ղ ղ ղ**։

Հաստատել Արցախի Հանրապետության տարածքի կոշտ կենցաղային թափոնների ուսումնասիրության միջոցառումների 2019 թվականի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:



ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԱԿՏԱԿԵՐՏ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



Հավելված
Արցախի Հանրապետության
կառավարության 2019 թվականի
մարտի 15-ի N 166-Ա որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԿՈՇՏ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ

I. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳԻՐ

Քնակավայրերի ու նրանց հարակից տարածքների, քնական լանդշաֆտների, ճանապարհամերձ հատվածների, մշակութային ու ժամանցային վայրերի մերձակա տարածքների կենցաղային և այլ տեսակի թափոններով աղտոտվածությունն Արցախի Հանրապետությունում հանդիսանում է շրջակա միջավայրի և մարդու առողջության անվտանգության, երկրի սոցիալ-տնտեսական զարգացման, քնակչության հարմարավետության ապահովման և զբոսաշրջային գրավչության վրա ազդող լուրջ մարտահրավեր: Արցախի Հանրապետությունում բացակայում են թափոնների վերամշակման, օգտահանման, այրման գործարաններ և քնապահպանական, սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման չափանիշներին համապատասխանող արտոնագրված աղբավայրեր:

Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մարտի 14-ի N 160-Ա որոշմամբ հաստատված «Արցախի Հանրապետության տարածքի կոշտ կենցաղային թափոնների ուսումնասիրության միջոցառումների 2018 թվականի ծրագրի» շրջանակներում իրականացվել են ուսումնասիրություններ Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի, Ասկերանի, Շուշիի և Մարտունու շրջանների համայնքների հարակից տարածքներում, որոնց արդյունքում արձանագրվել են 254 չարտոնագրված աղբավայրեր: Աղբահանությունը բացակայում է զգալի թվով համայնքներում: Արդյունքում, կենցաղային աղբն անկանոն կերպով թափվում է համայնքի մերձակա տարածքներում: Չկառավարվող աղբը հղի է բացասական հետևանքներով, աղբաթափման վայրերի մեծ հատվածներ մշտապես այրվում են՝ շրջակա միջավայր արտանետելով վնասակար նյութեր:

Վերոհիշյալ նկատառումներից ելնելով, նախատեսվում է շարունակել ուսումնասիրություններն Արցախի Հանրապետության տարածքի կոշտ կենցաղային թափոնների ուսումնասիրության միջոցառումների 2019 թվականի ծրագրով (այսուհետ՝ Ծրագիր) Արցախի Հանրապետության Մարտակերտի, Շահումյանի, Քաշաթաղի և Հաղրուփի շրջանների տարածքներում՝ բացահայտելու կոշտ կենցաղային թափոնների կառավարման ներկա իրավիճակը, ինչը հնարավորություն կտա ներդնել համակարգ՝ կոշտ կենցաղային թափոնների առավել արդյունավետ կառավարելու համար:

II. ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի նպատակն է Արցախի Հանրապետության Մարտակերտի, Շահումյանի, Քաշաթաղի և Հաղրուփի շրջանների տարածքներում գնահատել կոշտ կենցաղային

թափոնների կառավարման համակարգի ներկա իրավիճակը, ինչի հիման վրա հետագայում կմշակվի կոշտ կենցաղային թափոնների կառավարման ընդհանուր ուղղվածություն, որը կուրվագծի կոշտ կենցաղային թափոնների կառավարման բնագավառում պետության քաղաքականության առաջնահերթությունները, խնդիրները, մեխանիզմները և ակնկալվող արդյունքները:

Ծրագրի խնդիրներն են.

- 1) կոշտ կենցաղային թափոնների տեղադրավայրերի գույքագրում.
- 2) կոշտ կենցաղային թափոնների տեղադրավայրերի հողի հետազոտության տվյալների գնահատում.
- 3) համայնքներում իրականացվող աղբահանության ծառայության ներկայիս իրավիճակի գնահատում.
- 4) Արցախի Հանրապետության տարածքում կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի ներկա իրավիճակի վերաբերյալ տվյալների հավաքագրում.
- 5) կոշտ կենցաղային թափոնների անօրեն տեղադրավայրերի վերաբերյալ տեղեկատվական բազայի ստեղծում և դրանց կանխարգելմանը նպատակատղված առաջարկությունների մշակում:

III. ԾՐԱԳՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Ծրագրի շրջանակներում իրականացվելու են տեղեկատվության հավաքագրում և դաշտային աշխատանքներ: Իրավիճակի նկարագրության, հողի նմուշառման, կոշտ կենցաղային թափոններով աղտոտման հնարավոր օջախների բացահայտման, կոշտ կենցաղային թափոնների անօրեն տեղադրավայրերի հայտնաբերման նպատակով կատարվելու են տեղազննման երթուղիներ:

Ծրագրով նախատեսվում է 95 դիտայց՝ Արցախի Հանրապետության Մարտակերտի, Շահումյանի, Քաշաթաղի և Հաղրուփի շրջանների թվով 142 համայնքների ուղղությամբ: Տարվա կտրվածքով կվերցվեն հողի մոտ 50 փորձանմուշ, դրանք կտեղափոխվեն լաբորատորիա՝ հետազոտության նպատակով: Յուրաքանչյուր նմուշի համար կորոշվեն ծանր մետաղներ և այլ տարրեր:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է կատարել համայնքներում իրականացվող աղբահանության ծառայության ներկայիս իրավիճակի գնահատում և չարտոնագրված աղբավայրերի գույքագրում: Կատարված աշխատանքների ընթացքում հայտնաբերված կոշտ կենցաղային թափոնների տեղադրավայրերը կնշվեն քարտեզների վրա:

Ծրագրով նախատեսված աշխատանքներն ու գործառնությունները կիրականացվեն Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարության աշխատակիցների միջոցով:

Վերջում կամփոփվեն ստացված դաշտային և լաբորատոր աշխատանքների արդյունքները և կներկայացվի ամփոփ հաշվետվություն կոշտ կենցաղային թափոնների կառավարման ներկա իրավիճակի վերաբերյալ:

IV. ԱՎՆԿԱԿՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Ծրագրի իրականացումից ակնկալվում է Արցախի Հանրապետության տարածքում կոշտ կենցաղային թափոնների կառավարման ներկա իրավիճակի վերաբերյալ

բազային տվյալների ստեղծում, ինչը հնարավորություն կտա մշակել կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի զարգացման ուղղվածություն: Այն կբարելավի գործող աղբաթափման վայրերի կառավարումը՝ նվազեցնելով հիմնական էկոլոգիական հիմնախնդիրները, միևնույն ժամանակ ակնկալելով նոր առաջնակարգ աղբավայրերի ստեղծում, ինչի արդյունքում էապես կնվազի մարդու առողջությանն ու շրջակա միջավայրին հասցվող վնասը, իսկ կոշտ կենցաղային թափոններից մաքրված լանդշաֆտը կբարձրացնի Արցախի Հանրապետության գրոսաշրջային գրավչությունը:

V. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍԱԿՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Ծրագրի իրականացման համար «Արցախի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» Արցախի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի 05 բաժնի 6 խմբի 1 դասի «03. ԱՀ տարածքի կոշտ կենցաղային թափոնների ուսումնասիրություն» ծրագրով նախատեսվել է 2 660 000 (երկու միլիոն վեց հարյուր վաթսուց հազար) ՀՀ դրամ:

ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ



Ա. ԼԱԶԱՐՅԱՆ